

Թեան. ի Հայոց համարողութեան. ՌՃ. 2Գ. եւ
 ի նոյեմբերի. ԻԳ: Իսկոյն յետ օծեցման իմ. ի
 միւսում աւուրն. ի նոյն նոյեմբերի ամսոյ. ԻԵ.
 յաւուր տօնի յուլիանեայ. եւ վասիլուհւոյ. ի մէջ
 Արփիագիտակ սրբանոցի Սրբոյ Էջմիածնի. ի յաւ-
 ագ խորանումն. ի ներկայութեան ամենայնից
 Եպիսկոպոսաց. եւ յոգնակուտակ ժողովրդոց.
 բարձրացուցի ի գերապատիւ Աստիճան Արհի
 Եպիսկոպոսութեան. զՏէր Սարգիս Աստուածաբան
 Վարդապետն. ի վերայ բոլոր Կեսարիոյ Առնելով
 զնա միայն. Անդրանիկ իմոյ Չեռնագրութեան:
 Եւ ի ժամ. Սրբոյ Օծմանն իւրոյ. ի մէջ այն սար-
 սափելի յատենին. ի ներկայութեան բազմագունից
 Եպիսկոպոսաց. եւ ժողովրդոց. Պսակաւորեցի զնա՝
 նորագոյն մականունութեամբ. ըստ արգեանցն.
 եւ ըստ արժանաւորութեան. կոչելով զնա՝ Սար-
 գիս Շնորհալի, վասն շնորհաբուղես. եւ յոր-
 դառատ Սրբոյ քարողութեանն. եւ այլոց ար-
 գեանցն. զոր փորձիւ իսկ գիտեմք. նա եւ յայտ է
 ամենայն ումբ: Վասն սրոյ յայտնի լինցի ձեզ
 ամենայն հայկական տոհմից. որք ի Գաւառս. ի
 Քաղաքս. Յաւանս. եւ ի Գիւղորեայս՝ կայք բնա-
 կեալք: Աստուածաբան. եւ բացատրօղ խորոց
 խորհրդոց Տեառն Վարդապետաց: Արթուն ակամբ
 գիտօղ Պանծալի Եպիսկոպոսաց: սրբանուէր. եւ
 երկնահրաւէր Քահանայից: Ուղղաշաւիղ, եւ հա-
 մեստակենցաղ սարկաւազաց: Բարձօղ խաչին,
 եւ քրիստոսագգեաց Կրօնաւորաց: Եւ ամենայն
 Տեառնավիճակ պաշտօնէից. եւ եկեղեցական
 լրմանց: Նաեւ. Արգասազեղուն, եւ գոյիւք յոգ-
 նաբեղուն. Փարթամաց: Ճարտարաբան. եւ յա-
 տենախօս Մելիքներաց: Հաւատարիմ եւ իրաւա-
 դատ Տանուտերաց: Հանձարաշահ. եւ իմաստուն
 Վաճառականաց: Վայելչակերտ. եւ ազնուանկար
 Արուեստաւորաց: Ուղղակիւ. եւ նոյնաչափ
 Վաճառողաց: Քիրտ ընդ երես, եւ վաստակամեծ